ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԵՆ ԱԲՐՈՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**
Արմեն Աբրոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
Սլովենիայի Հանրապետություն (Լյուբլյանա) և Խորվաթիայի Հանրապետություն (Զագրեբ), 2019թ. սեպտեմբերի 1-4-ը:

4. **Հրավիրող կողմը.**
Եվրոպական Միության աջակցությամբ իրականացվող «ԵՄ-ն Հայաստանի համար. էլեկտրոնային կառավարման գործողություններ» ծրագիր:

5. **Գործուղման նպատակը.**
Մասնակցություն Եվրոպական Միության աջակցությամբ իրականացվող «ԵՄ-ն Հայաստանի համար. էլեկտրոնային կառավարման գործողություններ» ծրագրի «Մեկ կանգառ, մեկ պատուհան» Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի հարթակի և պետական կառավարման մարմինների միջև փոխգործելիության հարթակի ներդրման շրջանակում նախատեսված երկու ուսումնական այցերին:

6. **Քննարկված թեմաները.**
Քննարկումներն անց են կացվել «Սահմանային անցումային կետերում պիլոտային իրականացմամբ» ծրագրի պետական տեղեկատվական շտեմարանների միջև փոխգործելիության ապահովման բաղադրիչի վերաբերյալ: Ներկայացվել են Սլովենիայի և Խորվաթիայի կառավարությունների ներգրավվածության հարթակները և այն կառավարող կազմակերպչական հենքն իրական միջավայրում, որտեղ համակարգը գործող է և աշխատում է:

Մասնակիցները տեղում ծանոթացել են գործընթացի զարգացումներին, խնդիրներին, ռիսկերին և դրանց նվազեցման տարբերակներին, որոնց միջով Սլովենիան և Խորվաթիան անցել են Պետական փոխգործելիության հարթակի (GIP) իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացմանը հաջորդող գործառույթներին և գործողություններին, հնարավոր բարելավումներին և հետագա զարգացումներին այն համակարգերում, որոնք սերտորեն կցված են GIP-ին:

Ընթացիկ քննարկումներ են անցկացվել Հայաստանում համակարգի ամբողջական արտադրման համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Սլովենիայի Հանրապետության հանրային կառավարման նախարարությունում կայացած հանդիպման ընթացքում ներկայացվեց Սլովենիայի պետական տեղեկատվական համակարգերի փոխգործելիության հարթակը, որից հետո քննարկվեցին հարթակի ներդրմանն ու գործարկմանն առնչվող մի շարք հարցեր: Ներկայացվեցին նաև Սլովենիայում գործող էլեկտրոնային վճարումների գործող համակարգը, ինչպես նաև քաղաքացիներին և գործարար միջավայրին մատուցվող ծառայությունների էլեկտրոնային հարթակները: Հայկական կողմն իր հերթին ներկայացրեց այժմ Հայաստանում գործող էլեկտրոնային կառավարման համակարգերի, էլեկտրոնային ստորագրության փոխճանաչելիության, ինչպես նաև կառավարության փոխգործելիության հարթակին առնչվող հիմնական ձեռքբերումներն ու մարտահրավերները:

Խորվաթիայի Հանրապետության հանրային կառավարման նախարարությունում, որը ևս համակարգում է հանրային ոլորտում էլեկտրոնային կառավարումը, ՀՀ պատվիրակության կողմից ներկայացվեցին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից նախանշված հիմնական ուղղությունները, ներկայացվեց պետական տեղեկատվական համակարգերը սպասարկող կենտրոնացված տվյալների կենտրոնի հիմնական գործառույթները, ինչպես նաև հանրային կառավարման ոլորտում արդեն իսկ գործող հիմնական էլեկտրոնային հարթակները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Երկու երկրների և Հայաստանի գերատեսչությունների միջև ձեռք են բերվել ստացված տեղեկատվության հիման վրա հետագա գիտելիքներով և փորձով փոխանակվելու պայմանավորվածություններ, որոնց իրականացումն ապահովելու նպատակով ներկայումս մշակվում են համապատասխան ժամանակացույցեր և ձևաչափեր:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Արմեն Աբրոյան 09.09.2019թ.